

Մինչ ի ներկայս վայելեցին,
 Իսկ յետ աստեացս ի կենցաղին,
 Ետ յիշատակ յաւիտենին,
 Ի մայրն մեր յԵրուսաղէմ քաղքին:
 Միահամուռ սրբոց նմին,
 Ի տաճարն սուրբ Յարութենին,
 Ի դամբարան սուրբ Յակոբին,
 Եղբօր Տեառն մերոյ Յիսուսին:
 Այլ եւ դթած Տէրդ ամենին,
 Լսել տացէ զձայն հրաշալին,
 Զերանաւէտ բարբառ ի նմին,
 Ժառանգեցէք զանսպառն վախճանին:
 Ամէն եւ է եւ եղիցի:

Յերես անկեալ աղաչեմ զձեզ, ով դասը
 լուսերամ քահանայից եւ գումարք խաչա-
 կրօնից եւ կաճառք աստեղափայլ սարկաւա-
 դաց մանկանցդ սուրբ եկեղեցւոյ, որք օգ-
 տիք ի ամանէ եւ կամ օրինակէք եւ որք ժա-
 ոանդէք եւ ընթեռնուք եւ վայելէք հոգեւոր
 շահիւք, անմոռաց աղօթիւք յիշեսլիք ի
 Քրիստոս զմեզդ զառածեալ Մկրտիչ զբրիչս
 եւ զծնօղս իմ: Բայց անմեղազիւ լերուք սղա-
 լանաց եւ խոչորութեան զբրիս, քանզի դա-
 նօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, որ կիսէն
 ի վեր խոչորցուցի զգիրն, այլ ոչ իմ կամաւ,
 քանզի անանկութիւն, օտարութիւն եւ պան-
 դրխութիւն նեղացոյց զիս, վասն այդ պատ-
 ճառին համար շտապեցի զգիրն եւ խոչոր-
 ցուցի, զի միտք իմ ցնորեալ էր ի նեղութենէ
 եւ ի խղճմտութենէ եւ զթով ծնողացս, ըն-
 տանեաց եւ հայրենեաց: Քանզի դուք լաւ գի-
 տէք, սիրելի հարք իմ եւ եղբայրք, որ
 պանդխտութիւնն ծանր եւ զիժար ցաւ է,
 որպէս ասէ թէ Լաւ է անկանիլ ի ձեռս բար-
 բարոսաց քան թէ ի յօտարութեան եւ ի
 պանդխտութեան կեալ. եւ իմաստուն Խիկար
 ասէ. Բարձի բեռ մի ալ ի յուս եւ ոչ էր
 ծանր քան զաղքատութիւն եւ զտնանկութիւն.
 եւ զարձեալ միւս եւս՝ Բարձի արձիճ բեռ մի
 ի յուս եւ ոչ տեսի ծանր եւ զժար քան
 զղարխութիւն եւ զպանդխտութիւն: Որոյ
 փրկեսցէ փրկիչն ամենայնի Քրիստոս զա-
 մենայն հաւատացեալս անուան իւրոյ եւ ա-
 զատեսցէ ի դառն պանդխտութենէ ի նաւա-
 հանգիստն բարի: Մանաւանդ յիշման անար-
 ժանս յիշեցուցեալս եւ զձեզ յիշօղքդ հաւա-
 սար ամենայնի փրկէ ի սատանայական յորո-
 գայթէ աստ եւ ի հանգերձելում լսել տացէ

զերանաւէտ բարբառն եւ անդրաւ ուրախու-
 թիւնն պարգեւեացէ, ամէն:
 Եւ դարձեալ կրկին անգամ յորոք ան-
 կեալ աղաչեմ զձեզ յիշել ի Քրիստոս զսա-
 ցող սուրբ գրոցս զՍկանդար չալապին եւ
 զծնողսն իւր եւ զամենայն աղքատոհմսն եւ
 արեան մերձաւորսն, ընդ նմին եւ զմեզա-
 պարտ զբրիչս եւ զծնողսն իմ յիշեսլիք Աս-
 տուած ողորմի ասելով: Եւ լաւ պահողացն
 եւ խնամ տանողաց սուրբ գրոցս ողորմեացի
 Քրիստոս Աստուածն մեր ի յօրն աներեկին
 եւ անսպառ դատաստանին: Եւ որ յիշէ եւ
 Աստուած ողորմի ասէ ստացողին եւ աշխա-
 տողին, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ
 մերոյ, որ է օրհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգ-
 ւոյն յայժմ եւ անսպառ յաւիտենին, ամէն»:
 Պէտք է ստուգել ձեռագրին մէջ թէ Յի-
 շատակարանիս ոտանաւոր մասը նախորդին
 եւ յաջորդին հետ միահե՞տ կ'ընթանայ նոյն
 զբրիչութեամբ, թէ աւելի ուշ ժամանակէ է՝
 վասն զի ձեռագիրը նախնաբար գրուած է
 զբրասէր իշխանին համար ի վայելումն ան-
 ձին. դոնէ արձակ յիշատակարաններու մէջ
 խօսք չէ եղած ուրիշ նպատակի մը մասին.
 Իսկ ոտանաւոր սողերու համաձայն կը կտա-
 կուի Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին.
 «Իսկ յետ աստեացս ի կենցաղին ետ յիշատակ
 յաւիտենին, ի մայրն մեր յԵրուսաղէմ քա-
 ղաքին»:
 Ուրիշ մէկ յիշատակարանէ կը տեղեկա-
 րանք թէ իշխան Սքանդար չալէպ էր 1635ին.
 այս թուին անոր յանձնարարութեամբ նոյն
 Լեհացի Մկրտիչ կ'օրինակէ Ներսէս Ծնոր-
 ճալոյ Ընդհանրականը: Այս յիշատակա-
 րանն է 2.
 «Յիշեսլիք... յաղօթս ձեր մանաւանդ
 յիշման արժանին ստացող զԸնդհանուր տիե-
 ղերական նամակին սրբոյն Ներսէսի՝ զիշխանն
 իշխանի որդին պարոն Սկանդար չալապին,
 զի յոյժ փափաքանօք եւ յօժար եւ ջերմեռանդ
 սրտիւ ետ զսա գրել յիշատակ իւրն եւ ծնո-
 դաց նորին հօրն պարոն Սանոս չալապուն եւ
 մօրն Ծահմելէք խաթունին եւ իւրայնոցն ա-
 մենեցուն: Իսկ ես թարմատարս եւ տկարա-
 ցեալս ի բնաւին բարեաց զձագրեցի զԸնդ-
 հանրական նամակս սրբոյն Ներսէսի ի թուա-

2 Յիշատակարանս պահուած է Չմմառի Թ. 296.
 ձեռագրին մէջ (թղ. 62բ) 1803ին օրինակուած յԱյն-
 թաղ. հմմտ. Բէշլեան, Յուլիոսի նոյն հաւաքման
 հայերէն ձեռագրաց:

կանիս Հայոց ՌՁԳ (1635) ի մայրաքաղաքն
 Բերիայ, որ այժմ կոչի Հալապ, ընդ հովա-
 նեաւ սուրբ Աստուածածնին (եւ) սուրբ Բա-
 ոասունք Եկեղեցեաց, ի հայրապետութեան
 կիլիկեայ նահանգին տեառն տէր Սիմէոն կա-
 թողիկոսին եւ բռնակալութեանն Տաճկաց
 սուլթան Մուրատին՝ ձեռամբ յօգնամեղ եւ
 եռաթշուառ զառածեալ անձին՝ անհմուտ եւ
 անարհեստ տրուպ եւ բծուն զբշիս Լէհցի
 Մկրտիչի: Աղաչեմ զձեզ զվայելողք սորին
 յիշեցէք զվերոյիշեցեալ զյիշման արժանին
 պարոն Սքանտար չալապին ի սուրբ եւ ի մա-
 ղուր աղօթս ձեր. ընդ նմին եւ զիս զանար-
 ժանս եւ զծնողսն իմ. որ եւ դուք յիշեալ լի-
 ջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ ի միւսան-
 ջիք զաւրտեան իւրում, որ է օրհնեալ յա-
 Վտեանս ամէն: Հայր մեր որ յերկինս...»:
 Յիշատակագրութեան մը մէջ, գրուած
 1636ին, կը կարգամ, թէ Գրիգոր Կեսարացի
 իւր կտակին մէջ կարգադրած է որ իւր գոյ-
 բերը «թէ դիրք եւ թէ այլ սպրանք» Յով-
 հաննէս վարդապետ բաժնէ «Ծահին Չալա-
 պուն ձեռամբն եւ Իսկանդար չալապուն.
 2 գերք էջմիածնայ եւ զայլն աստ եւ անդ 3»:
 Չեմ կրնար լսել ստուգութեամբ, թէ այս
 Սկանդար չէլէպին Սանոսի՝ որդին է:

8. ՊԵՏՐՈՍ ԶԵԼԵՊԻ

Լսեցինք վերագոյն (§ 6) յիշատակագրին
 խօսքերը, որ կը գրէր թէ Սանոս չէլէպին
 նորակերտ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ ի
 կարին «գառաջին մկրտութիւնն (Փիլիպպոս
 կաթողիկոս) Պետրոս չալապին է մկրտած»:
 Նախադասութեան ընթացքէն այնպէս կը
 հասկնուի թէ Պետրոս նորածին որդին է Սա-
 նոս չէլէպին, ծնած մօտաւորապէս 1637ին:
 Այս Պետրոս չէլէպին ունեցած է իր կար-
 դին որդի մը, զոր անուանած է յանուն հօր
 Սանոս: Ճանիկեան¹ կը գրէ թէ տեսած է
 Ակնայ Ս. Գէորգ եկեղեցւոյ առաջնորդարա-
 նին մէջ Ծարակնոց մը, գրուած 1435ին,
 որուն ստացիչներն են եղած 1678ին «Հալա-
 պեցի Պետրոս Զէլէպի եւ անոր որդին Սա-
 նոս»:

1 Ն. Ա. Կիւրեան

ՍԻՄԷՈՆ ՓՊՐԻ ԼԵՀԱՅԻՈՑ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ
 ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԷ Ի
 Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՌՈՄ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԿԷՄ
 ՅԱՄՍՆ
 1608—1619:
 ՅԱՒԵԼՈՒՄ՝ ԲԱՂԱԲԱՎԱՆ ԱՆՅԲ Ի ԼԵՀՍ
 (1621—1635)
 ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՐ
 (Շարունակութիւն):

7. Ի ՏԵՐՈՒԹԵԱՆ ՓԱՓԻՆ

Եւ իբրեւ մերձեցան աւուրք զնալոյ ի
 Հոռոմ, ո՛հ եւ վայ ինձ, զի աղմամբ չարին
 եւ նախանձու նենկաժող սուտ եղբարց կամ
 թէ բանասարկու վատ մարդկանց՝ խոտու-
 թիւն եւ չիթ անկաւ մէջ մեր. եւ կովեալ 5
 ճետ Չաքարիայ վարդապետի՝ որոշեցաք ի
 միմիանց: Նա գնաց ի Հոռոմ եւ ես մնացի Վէ-
 նէտիկ այլ եւս տասն օր: Եւ գտեալ նաւակ
 մի պատրաստական՝ մտի ի նա եւ վեց օրն 10
 հասայ ի յԱՆՔՈՒՆԻՍՅՈՒՆՅՈՒՆՅՈՒՆՅՈՒՆ
 եւ սա սկէլէ եւ նաւահանգիստ էր: Եւ այս
 քաղաքս չէն մեծ եւ բարելի էր եւ մրգաշատ,
 զաղաքս չէն մեծ եւ բարելի էր եւ մրգաշատ,
 ի վերայ բարձրաւանդակ տեղով: Մինչեւ
 աստ էր տուքային վէլիաթն, եւ աստի սկսան 15
 փափին քաղաքն. եւ այլ ոչ երեւէր Մար-
 կոսի նշան, այլ Պետրոսի բանալիքն եւ փա-
 վին թագն կոփած ի վերայ մէրմէրի, ամէն
 տեղ եւ քաղաքին զրուանն եւ սարայնին: Եւ
 ասին թէ Անքունիա թագաւորն է շինել զքա-
 ղաքս յիւր անունն: Եւ ի մէջ ծովուն էր 20
 դարձր լեռոն մի եւ մեծ եկեղեցի մի էր ի
 բարձր լեռոն մի եւ մեծ եկեղեցի մի էր ի
 գլուխն գմպէթայարկ. անդ է, ասին, զերեզ-
 ման շինողին. բայց մեք չեւաք ի վերն: Եւ
 կոյր մեզ անդ եկեղեցի մի քարէ եւ չրիթալ,
 տօշակ եւ անկողին: Կացի անդ երեք օր վասն 25
 բարեչունչ օղոյն եւ քաղցր հաւային:

Եւ անտի ելեալ՝ կէս օրն հասաք ի ՄԱ-
 ՏՕՆԱՅ ՏԷ ԼՕՐԷԹ, որ է պատկեր Աստուա-
 ծամօրն, որ ի ժամ փոխման խնդրեաց Յո-
 հաննէս աւետարանիչն՝ տվեալ տախտակ. զոր 30
 սուրբ կոյսն առեալ եղ ի վերայ երեսացն. եւ
 օրհնութեամբ շնորհացն տալուորեցաւ ի նա
 սուրբ զէմքն, զոր յետ փոխմանն բազում
 սքանչելիս առնէր յԵրուսաղէմ եւ ի Նաղա-

2 աստմամբ: — 25 յանկողին: — 26 բարեչունչ
 յօղոյն:

3 Թորոս Աղբար, Ա., էջ 294—295:
 1 Հնութիւնք Ակնայ, էջ 79 ծան.:

35 րեթ. զոր յետ բազում ամաց կամօք եւ հրա-
մանաւն Աստուծոյ բարձեալ եղեւ ի հրեշտա-
կաց տաճարն եւ պատկերն եւ բերեալ աստ ի
այս խասապայս, որ եւ աստ բազում եւ մեծ
40 սքանչելիս առնէ: Եւ զի յայտնի եւ ճշմարիտ
է բանն. զի պատկերն եւ տունն խիստ հին
եւ սեւացել են. եւ թագաւորք բազում ան-
գամ գողացեալ տարել են յաշխարհն իւրեանց,
բայց նա ինքն ելեալ գայր ի տեղս այս. զի
աստ հաճեցաւ բնակիլ. եւ ոչ հպած եւ ոչ
45 աւիրած էր զնա բնաւ՝ զհին եարուն, այլ
առեալ ի մէջ գայն՝ շուրջանակի մեծ եկեղեցի
են շինել մեծածախ, մեծահազակ եւ փառա-
ւոր, նման Այսոֆին: Եւ կայր ինքն ճԾ
քահանայ, թող զայլ սպասաւորս: Եւ այնպէս
50 մեծ ուխտատեղ է, որ ամէն օր հինգ, վեց-
հազար հոգի կու գան ուխտ. եւ ցերեկի չկա-
րես մտանել ի նա վասն բազմութեան անբո-
խին: Եւ կայր գոնապան մի, որ գիտէր
տաճկի լեզու. զոր տեսեալ զմեզ՝ երեկ առ
55 մեզ եւ ասէ. Ով հէմչէրտիք, ես զձեզ գիշե-
րով մուծանեմ, մի հողայք, զի այժմ խալա-
պայ է եւ չէ հնար մտանել: Եւ մեք խնդա-
ցեալ՝ հարցաք թէ դու ո՞վ ես կամ ուստի.
Եւ նա ասէ. Ես Ղայսարու եմ, սուկնի տաճիկ
60 եւ չափուչ էի. եւ անկեալ գերի՝ ծանեայ
զճշմարտն Աստուած եւ մկրտեալ եղէ քրիս-
տոնեայ. եւ այս քառասուն ամ է, որ սուրբ
տաճարիս խղմէթ կ'անեմ եւ աւել կ'ածեմ.
ուկնիմ երեք որդի քահանայ: Եւ իբրեւ երե-
65 կոյ եղեւ՝ առեալ զմեզ մեծաւ երկիւղիւ եմոյծ
ի մատուռն. եւ բացեալ զխարաղոյրն տեսի
զամէնօրհնեալ փայտն՝ սեւ եւ հին, ի մէջ
արծթի դրած. եւ ունէր աննման թագ մի ի
զլուխն՝ անդին ակամբ ընդելուզած եւ մար-
70 գրրտով շարեալ. եւ կայր առջեւն տան կան-
թեղ կախեալ մեծամեծք եւ մարդաչափք՝
Սպանիու, Փոանցու եւ այլ թագաւորաց
զրկած. զի տարեն մի ճանապարհէ գան առ
նա յուխտ վասն բազում սքանչելեացն: Զի
75 Փոանկաց աշխարհն եւ Լեհ, ամէն եկեղեցի
սահմանք է, զինչ սրբոյ անուն որ լինի եւ
զինչ սքանչելիք որ արարեալ է, զամէնն կու
նախշեն տախտակաց վրայ. բայց սորա հա-
զար, երկուհազար տախտակ կայր գրած.
80 գորս ի բազմաց մինն ասացից: Զոր մի ոմն
հեռաստանէ ախտաժէտ գոլով՝ լուաւ զմեծ

սքանչելիս սուրբ պատկերիս. գայր առ նա
մեծաւ յուսով. եւ հասեալ ի գաւառ մի ան-
հաւատ հերետիկոսաց՝ կալան զնա եւ տա-
րան ի մեծն: Եւ նա եհարց թէ Ո՞րք երթաս.
ասէ ցնա. ի Մատոնա (տէ) Լ(օրէթ): Նոքա
ասեն այսպնելով. Եւ զի՞նչ ընծայ տանիս
նմա, որպէս օրէն է: Եւ նա ասէ. Զիս եւ
զիմ սիրտս: Նոքա ասեն. Ամենայն ոք որ ըն-
ծայ տանի, ի ձեռս ունի եւ դու ոչ. վասն այն
90 պարս է զի եւ դու ի ձեռս ունիցիս զպար-
զեւս: Եւ պեղծքն ճեղքեալ զորովայնն հանին
զսիրտն եւ ետուն ի ձեռքն եւ ասեն. Տար
այսպէս: Իսկ նա զօրութեամբն Աստուծոյ եւ
չնորհօք պատկերին գնայր վազէր արազըն-
թաց խնդութեամբ մինչեւ ի սուրբն Լօրէթ.
Եւ անկեալ առաջի սուրբ պատկերին ասէր
լալով. Առ յինչն զընծայս իմ զսիրտս, զի այլ
ոչինչ ունիմ. եւ բժշկեա զիս, ով սուրբ
պատկեր սքանչելադործ: Եւ իսկոյն հաստա-
100 տեցաւ սիրտն ի տեղի իւր ողջացեալ: Փառք
Աստուծոյ:

Զոր եւ մեք գետնամած խոնարհեալ
երկրպագութիւն մատուցաք եւ մեղաց թո-
ղութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ննջեցելոց: 105
Եւ կացաք անդ երեք օր. զի երեք օր
հաց եւ ջուր տային Հայոց ուխտաւորացն եւ
իւրեանց ազգին մէկ օր. եւ Հայոց հաւ ու
սագ կու տային. եւ Փոանկաց միս լոկ
միայն: 110

Եւ վէնչտիկու մինչ ի մեծն Հոռոմ ԺԵ.
Եղեանք է. ամէնն շէն եւ պարսպաւոր ի վե-
րայ բարձր լերանց, ծովու եղբօքն. եւ ա-
մէն քաղաք վասն սիրոյն Քրիստոսի եւ Հայոց
եկեղեցի, հոգէտուն քարէ շինած էր եւ երեք
օր կերակուր կ'ենէր: Ապա զի Հայք այժմ
սակաւ գնան, տարին մի, երկու կամ երեք,
չորս, վասն որոյ զաֆթ արին Փոանկնին գա-
մենն եւ տիրապետեցին. եւ ինքեանք կենան
այն տներն: 120

Բայց Փափին երկրին Փոանկնին յոյժ աս-
տուածավախ եւ երկիւղածք են, հիւրասէր,
ողորմած, հեղ եւ խոնարհ. եւս առաւել յոր-
ժամ զհայ տեսանեն՝ ցնծան եւ խնդան, փա-
րին եւ փաղաքշին եւ մեծ սէր եւ դուրս ցու-
125 ցանեն: Ապա մեր ազգն յոյժ վատ եւ ան-
միարան է, սէր չունի եւ շատաշրջիկ, եւ
ուր որ երթայ պիտի մէկ վատ անուն մի
հանէ. եւ այնպէս չար են, որ երկու հոգի՝

45 յաւիրած: — 60 ծանեա: — 64 յերեկոյ: —
81 յախտաժէտ:

95 չնորհօք... յարազընթաց:

130 մէկ օր չկերեն կենալ հիտրաց բնաւ, ոչ
միայն աշխարհականք, այլ եւ կարգաւորք. եւ
յորժամ կուլին՝ ոչ միայն մի բան կամ երկու
ասեն եւ լսեն, այլ զօրն ի բուն. այլ եւ
տղայութեան գործն երեսն տան. եւ այնպէս
135 նախատինք եւ զազիր խօսք եւ զրուցք եւ յի-
շոնց տան, որ լսողքն գարշին. եւ զայն ոչ
թէ հայի լեզուաւ, որ այլազգ չիմանայ կամ
չհասկանայ, այլ այնպէս լեզուաւ հայհոյեն,
որ ամէն ազգ հասկանայ: Եւ այտ կուլովն եւ
140 ատելութեամբն ցիր ու ցան են եղել. եւ ա-
մէն ազգի աչաց ելել են:
Նմանապէս եւ այս աշխարհս ամէն քա-
ղաք կերակուր, ըմպելին, տօշակ, եօղան եւ
այլն վեր են կալել, բայց միայն տներն եւ
145 ժամն կայ դեռ եւս: Եւ ասին մեզ թէ վանա-
տիկու չբիթալն տարին երկու երեք Փուցի
զինի կու դար. եւ ամէն շաբաթ դային էր
եղել հացն, միսն մինչեւ աղն եւ քացախն,
նաեւ դրամ դային արած. իսկ Հայքն ուտէին
150 եւ յորով զինի ըմպելին, արբենային, ինն,
ժով զինի է այն երկրին՝ եօթն տարեն, ինն,
տասն եւ աւելի. կուլէին, ճէծվէին եւ մէկ-
ղմէկ սպանանէին. այլ եւ այլ չարիս դոր-
ճէին. եւ մտեալ ի ներս այլ չկամէին անտի
155 զնալ. մինչեւ եասախշիքն ի դուրս ձգէին
զարպով. եւ այսպէս ուրախ եւ մէկմէկ
եղեալ օտար ազգաց մէջն, մէկզմէկ ատէին
եւ չուղէին: Զոմանս հետ բողոս, հետ ման-
չու բոնէին. զոմանս հետ այլ չարութեան.
160 այլքն կամաւ աղթարմա եղան, ոմանք հա-
րամի, այլքն այլք իմն:
Որպէս ի մեր ժամանակս չորս հայ եւ
կին մի Եղարէլ եւ Հերովիդայ. Ծեր-
հատուրան Ուֆայեցի միաբանեալ ուխտ
165 զնային սուրբ Յակոբ. եւ ամէն մէկ սուրբ
Աստուածածնի պատկերն կախեցին վիզն ի
վայր, զի ազգն այն յոյժ սիրեն եւ պատով
գպատկերն Աստուածամօրն, վասն որոյ այնով
չըջին եւ մուրան, զի աւելի առնուցուն: Եւ
170 մերթալն հանդիպեցան ձիււորի մի. եւ տվին
գպատկերն համբուրել. իսկ նա եղեալ սրտին
համբուրէր. եւ տեսեալ զի Հայք են, եհան
զմեծ քէսան, ետ նոցա զուռուչ մի. եւ էր

քէսան լի: Զայն տեսին Հայքն եւ մտաւ ի
նոսա սատանան, իսկ չար կինն առաւել եղեւ 175
պատճառ չարի նոցա, որպէս եւ ա՛յն Ադա-
մայ. եւ հասեալ յետեանց առին զնա ի ձիււռն
վար. եւ սակաւ մի մեկուսացեալ ի ճանա-
պարհէն՝ չախուով մորթեցին զանմեղ բարե-
180 բարն իւրեանց. որպէս Կային զԱրէլ. եւ թո-
ղեալ զնա կիսամահ՝ զձին ի բաց թողին ար-
տօրնօք եւ ինքեանք փախան: Իսկ նա գառն
խոկայր. եւ անցաւորքն ճանապարհին լուան
զձայնն. եւ որոնեալ գտին զնա մինչդեռ
185 չուռնն ի բերանն էր. եւ հարցին թէ ո՞վ ա-
բար գայն. եւ նա յիշարաթով հասկացնէր եւ
տօլպանտ ցուցանէր. զոր իմացեալ եւ ի խրե-
ղիւր ելեալ գտին զնոսա եւ բերին առ դա-
տաւորն քաղաքին. զի այն աշխարհն այլ
մարդ տօլպանտ չի փաթթեր, միայն Հայք: 190
Եւ իբրեւ զօքանճան տվին, խրէր էկան. զոր
չորսն ալ չանկալն զարկին. իսկ զպեղծ կինն
երեք անգամ անին բոլորեցին եւ զձեռս յետս
կապեալ պարանօք ի վեր քարչեցին, որ ար-
մուկինն շիտկաւ. ամենեւին խրար չերեկ 195
եւ ոչ ի խոստ. ապա թողին զնա ի բաց: Եւ
մեք տեսեալ զնա ի վանատիկ եւ հարցաք.
նա ասաց զինքն անպարտ գոլ: Եւ այսպիսի
վատթար գործովք մերժեցան եւ անկան երե-
200 սաց Հայք:

Այլ եւ ասին մեզ թէ յառաջն խիստ
պատվէին զազգս Հայոց իբրեւ գտուրս Աս-
տուծոյ. այլ եւ զ(ու)խտաւորաց զհին չու-
խան պատառէին եւ միմիանց պարգեւք
տային եւ արմաղան: Իսկ այժմ ոչ այնպէս: 205
Եւ Փափի աշխարհն յոյժ բարի եւ ան-
խոտ, անկուի են. սուր ամենեւին չունին.
այլ եւ զանկաց ճոթն կոտորած է ամենին.
չունին ստութիւն. կաշառ չառնուն ի վերայ
իրաւանց, այլ արդար դատաստան առնեն, 210
առանց նենկութեան: Որպէս տեսաք յաւուրս
մեր եղեալ գործ. զի իշխանի որդի մի ա-
թոռակից գոլով այլ իշխանաց, որդի նորա
անկաւ յարազիտութիւն. զոր ըմբռնեալ
եղին ի բանս: Եւ զայս չարս ուսուցին Մահ- 215
մէտականք, զի բազում մահմէտական վա-
ճառականք կան ի վանատիկ. ի նոցանէ մնաց
ազանտս առ նոսա մինչեւ ցայժմ: Զոր յետ
աւուրց վճիռ հասեալ տանէին զնա այրել.
իսկ եղկելի Հայր նորա լայր եւ ճոխէր զմօ- 220
րուքն, քանզի միածին էր նմա. անկանէր

150 յարբենային: — 160 յաղթարմա: — 163 յե-
ղարէլ: — 169 յաւելի:
1 Գժրախտարար այսօրուան համար ալ կ'արժէ
հայ ուղեգրին արդար գանգատը:
2 Խօսքը Հայոց եկեղեցիներու եւ հոգեւորաններու
մասին է:

182 փախախան: — 210 իբրաւանց:

յոտս իշխանաց, աղաչէր մի կորուսանել
 զորդի նորա. Խնայեցէք, ասէր, յարխս իմ եւ
 ողորմեցարուք ծերութեան իմոյ. զի եւ ես
 225 իշխան եմ իբրեւ զձեզ եւ աթոռակից. ես
 ձեզ տամ որդոյս կշռովն ոսկի՝ որչափ հակէ:
 Եւ նոքա ասեն. Մեք յԱստուծոյ երկնչիմք եւ
 Գրոց բանից ի դուրս ոչ ելնեմք. զինչ Գիրն
 ասէ զայն առնեմք: Ոչ ի դրամն ազահեցան
 230 եւ ոչ իշխանէն երկեան, այլ այրեցին զնա ի
 մէջ քաղաքին: Եւ այսպէս ամենեւին հիւայ
 կամ խալպ բան չերեւիլ:

Պատմեմ ձեզ բան մի այլ, զի եկաւ Ան-
 կուրու եւ Սօֆիու եւ Թօսու եւ այլ տեղաց
 235 ըստ սովորութեան բազում սօֆեր. զոր սա-
 բաֆքն իմացան որ զալպ էր. զի կէսն կամ
 աւելին օշխրի բուրդ էր խառնած: Կալան
 զվաճառողքն եւ չարչարեցին, թէ դուք
 զբուրդն փոխանակ տիֆաիկի ծախէք. նոքա
 240 խոստովանեցան եւ ասեն. Ձի ոչ դոսանի տիֆ-
 աիք յաշխարհս մեր. զի ճէլալիքն աւերեցին,
 քանդեցին զայն երկիրն, զայժքն զորս սպա-
 նին, զորս տարան ընդ իւրեանս, վասն այն
 այսպէս զաղալ գտաք ի ըողակն մեր: Եւ
 245 նոքա բերեալ զամենայն ի մօյտանն եւ զիղե-
 ցին եւ կուտեալ փայտ ի վերայ անխնայ
 այրեցին: Բայց զտէրսն անփնաս թողին:

Եւ այլ վաճառականք Ուոուէլու մոմ
 բերին. մեծ կէսն ճրագու էր. զայն իմացեալ
 250 ըմբռնեցին զտէրս նոցա. եւ նոքա ետուն
 ժՌ. դրամ, զի մի գատեցին. եւ նոքա չա-
 ոին, այլ զմոմն կուտեալ առջեւ Սա Մար-
 քոյին այրեցին. որ հալեցաւ եւ անյայտ եղեւ:
 Եւ ասին թէ ԼՌ. զուռուշի էր մոմն. եւ
 255 վասն այսպիսի արդարութեան եւ իրաւանց
 ուղղեալ է աթոռն թագաւորութեան իւրեանց,
 ըստ այնմ թէ Արդարութեամբ եւ իրաւամբ
 ուղղեալ է աթոռ նորա:

Թէպէտ զինին շատ եւ առատ է, այլ ար-
 260 բեցութիւն բնաւ ամենեւին չկայ ի մէջ նոցա.
 եւ թէ ըմպեն՝ ջուր խառնեն եւ ջրով ըմպեն.
 այլ եւ չկայ ի մէջ նոցա շլթախ եւ իֆդիրայ
 եւ զուր. չունին զուլում եւ անխաւութիւն.
 չկայ եւ ործապղծութիւն, եւ թէ ուրեք գտցի,
 265 իսկոյն այրեն անխտիր: Չկայ գողութիւն,
 սպանութիւն, հարամութիւն. ոչ թէ միայն
 ի քաղաքսն, այլ եւ ի ճանապարհս եւ ան-

229 յազահեցան... յերկեան: — 237 յաւելին: —
 239 զփութին: — 242 բանթեցին: — 255 յերաւանց:
 — 257 յերաւամբ: — 264 ուրէք:

վար վայր տեղս եւ յանտառս մացառուտս.
 եւ ոչ գիտեն անդ թէ քարվանն ինչ է, այլ
 որ տեղ կամի ոք զնալ, միաւոր երթայ ա-
 270 նահ. եւ թէ ոսկի թագ զնես ի գլուխո՞ ոչ
 փնասիս. զի եւ մեք, որ անլեզու եւ անծանօթ
 զարիպ էաք, յերկար ճանապարհնին զնայաք
 խաղաղ եւ անդորր. որպէս ի ժամանակս
 Մօրկայ կայսերն³: Եւ ամէն նետաձիգ՝ պան-
 275 տով եւ չէնլիք կայ: Այլ եւ աղօթից եւ ժա-
 մու ժիր եւ հաստատ են, աւելի քան զՄահ-
 մէտականս. ոչ թէ միայն ծերք, այլ եւ
 տղայք, կանայք եւ նոր հարսներ եւ կոյս
 աղջկունք, ունելով զիրք ի ձեռս իւրեանց
 280 երթան յեկեղեցիս. զի սոքա խրատեն զա-
 ւական ըստ կանոնաց: Ոնց լեզուն բացվի՝
 Հայր մեր, Հաւատամք, Ողջոյն եւ Փառք ի
 բարձունս ուսցնեն. ձեռս խաչ հանել, առ
 Աստուած յաղօթս տարածել. եւ մինչ ի ճաշ
 285 կամ պատարագէն չենեն, հաց չեն ի տալ.
 եւ ամէն օր մինչեւ աղօթք չանեն՝ չեն ու-
 տել: Այլ եւ զփոքր տղայս առեալ ի ձեռաց
 տանին յեկեղեցին: Եւ թէ ոք այր կամ կին
 որ թէ օր մի ժամ չերթայ կամ պատարագ
 290 չի տեսնու, կ'ամաչեն ի դուրս ելնել. կար-
 ծեն թէ իբր մեծ փնաս են գործել: Եւ ողոր-
 մութիւն բազում կայ առ նոսա, ծածուկ եւ
 յայտնի: Եւ են յոյժ խոնարհ եւ հեզ, ան-
 295 բամպաս եւ անխաչար:

Ապա վա՛յ եւ եղուկ յոյլ եւ ծոյլ անձին
 իմոյ. զի կայ ազգս մեր, որ երկու, երեք
 տարով եկեղեցոյ դուռն չեն կոխել. եւ ոմանք
 սպիտակ ալեօք զՀայր մերն ոչ գիտեն, թող
 300 թէ զՀաւատամքն կամ զայլ ինչ. այլ եւ ոչ
 յերեսն խաչ հանեն, զոր Պօղոս գոչէ թէ Յու-
 լից եւ ծուլից փակեալ է արքայութեան
 դուռն:

Վասն աւրինաց պահպանութեան եւ
 ստէպ աղօթից բազում բարեաց արժանի ա-
 305 բար գնոսա Աստուած. եւ ապրեցոյց ի բազ-
 մաղիմի հարուածոց եւ ցասման որ զան ի
 վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց,
 որպէս լինի այլ երկիրն՝ ջորեակ, թրթուր,
 ջալուկն, մարախն, մահատարածանն, սովք,
 310 սրածութիւնք եւ այլն: Նա եւ ոչ թշնամիք
 գան ի վերայ նոցա. այլ են խաղաղ եւ ան-
 խոռով. ունին գանձս բազումս եւ խաղինայս,
 զարպատս եւ վիմաչէն բնակութիւնս բազ-

³ Հմմտ. Պատմութիւն Հայունեաց խաչին, Չեռ.
 Վիեննայի Թ. 791, թղ. 132 ա. «ոմանք յառակս ար-
 կեալ ասէին թէ «Իբրեւ յաւուրս Մօրկայ նստեալ էք
 անհոգս»:

մայարկս. այլ եւ են երկարակեացք եւ ա-
 315 ոողջք, փափուկք մարմինք եւ սրբապահք.
 եւ առաւել մրգօք եւ բանջարօք շատանան
 քան թէ մսով եւ այլ անհալ կերակրովք: Եւ
 պատմեաց մեզ այր մի ծեր ֆռանի, թէ ձի.
 320 տարու եմ, եւ նոր ատամունք բուսել էին
 նմա. եւ ասէր թէ ես իմ ժամանակս ոչ մահ
 եմ տեսել, ոչ սով, ոչ սուր. եւ այս լու է,
 թէ ոչ արդարութեան եւ յիրաւանց, որպէս
 325 զազգս եւ արդարութիւնն բազմացունց
 որդոց որդիս. եւ թէ Սէրն ծածկէ զբազմու-
 թիւն մեղաց: Եւ այնպէս սէր եւ միարան են,
 որ երբ տեսնան զմիմիանս՝ խոնարհութեամբ
 330 զրկախառն համբուրիւ ողջունեն սիրով զմի-
 միանս, որպէս թէ հեռու տեղաց են եկել.
 կամ թէ վաղուց չեն տեսել զիրար: Եւ զայն
 առանց երկբայութեան եւ կեղծաւորութեան,
 զի սէրն է գլուխ օրինաց եւ պատվիրանաց.
 335 եւ հազար երանի ազդին որ սէր ունի:


Արդ ո՛րպէս զովեցից զազգն սուրբ եւ
 ընտիր, որ ի սկզբանէ մինչեւ ցայժմ կայ
 հաստատ թագաւորութիւն նոցա եւ հայրա-
 340 ստուած է միայն առանց մեղաց. իսկ մարդիկ
 տուած է միայն առանց մեղացէն. Ոյ է
 մեղօք զառածեալ ըստ մարգարէին. Ոյ է
 մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ. եւ Յոք ասէ,
 345 Թէ միօրեայ իցէ ծնեալն, եւ այն ոչ է առանց
 մեղաց: Ունին եւ սոքա յովով վատթարու-
 թիւն. վստահ պոռնկին: Այլ եւ զամենայն
 ժիժմունս ուտեն. կրեայ, նապաստակ, գորտ,
 350 օձ եւ այլն, որպէս Եփրատացիք. եւ զայն
 ոչ վասն ազահութեան, այլ վասն զօթութեան.
 թեան, որպէս կատուն վասն զօթութեան.
 355 եւ այլն վասն այլ իրաց: Եւ սեղանոյն ելա-
 նեն կիսակուշտ եւ ոչ ազահին ի կերակուրն
 կամ ի գինին բնաւ. այլ եւ չունին սովորու-
 թիւն շատ նստիլ ի սեղանն եւ եր-
 360 վանել. այլ ուտեն եւ շուտ վեր կենան. եւ եր-
 թան վօլպայ զարնել եւ զրոյց տալ: Ի պա-
 հոց ուտեն ձուկն, ձէթ եւ այլ: Բայց եօթն
 մահուչափ մեղաց ի բաց են. զի որպէս ասէ
 365 Յակոբոս առաքեալն՝ Են մեղք որ ներելիք
 են եւ են որ մահուչափ. թէպէտ առ նոսա
 370 երեւի ներելին, այլ առ այլս մահուչափ. եւ
 են ազգ որ ձուկ չուտեն, ոչ ձէթ, ոչ գինի,
 են ազգ որ ձուկ չուտեն, ոչ ձէթ, ոչ գինի,

315 յերկարակեացք: — 340 մարդիք: — 347
 յեփրատացիք... յազահութեան:

այլ բամպասանօք զմարդոյ միսն ուտեն,
 հարբենան, ազահին որպէս զանասուն ի պա-
 հոց եւ ոչ դուրանան մինչեւ զգօտիս չթու-
 365 լացնեն. եւ Պօղոս ասէ. Ոչ չունք, ոչ ազահք,
 ոչ արբեցողք կարեն ժառանգել զարքայու-
 թիւն: Տեսէք թէ որպէս Փարիս ունի մեղք
 մեղաց: Սոքա բնաւ հարբենան, չբանապանեն.
 եւ թէ օտար ոք տեսնեն հարբած՝ հիանան
 370 եւ փախչին ի նմանէ որպէս զիւահարէ. եւ
 մեծ ամօթ է առ նոսա հարբիլն: Եւ կացաք
 առ նոսա ինն ամիս. օր մի չտեսաք արբած
 ֆռանի. զի զարբեցողն ընդ շնացողս համա-
 375 ըրին որպէս Պօղոս: Վասն այս պատճառացս
 լցել է Աստուած զնոսա հոգեւոր եւ մարմնա-
 լոր բարութեամբ, լիութեամբ, ոսկով եւ
 արծաթով, տամբք եւ տեղօք, ընչիւք եւ
 սպրանօք, որդովք եւ դատերօք, ըստ այնմ
 380 թէ Տեսցես զորդիս վայելուչ. եւ թէ Շտեմա-
 բանք նոցա լի են, խաչինք նոցա բազմածինք
 են եւ անդեայք նոցա պարարօք:

Եւ զայն թողով ի բաց, եկեսցուք ա-
 ռաջարկեալ բանն մեր, զոր բազում քաղա-
 քօք, զղեկօք եւ գեղեցկաչէն ամրոցօք ան-
 385 ցանելով:

(Շարունակելի): Հրատարակեց՝ Հ. Ն. ԱՅԻՆՆԱՆ


ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ
 ՏՈՎԱՆԿԱՅԻՆ
 ԻՐ ԿՆԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ
 Ա.
 ՆԱԽՆԻՔ

Այլազովսկի անուան —ուլսկի վերջա-
 ծանցը կը թելադրէ ինքնին, որ տոհմիս նա-
 խաւոր բնակութիւնը փնտռենք Լեհաստանի
 սահմաններու մէջ: Եւ կը պատմէ արդէն
 աւանդութիւնը, թէ Այլազովսկիները Լե-
 385 հաստանէն զաղթած են Խրիմ: Ստուգիւ ալ
 կը գտնուին Մոլտաւիա-Տրանսիլւանիա գծին
 կը գտնուին Այլազներ, որոնք Գալիցիայէն տեղա-
 փոխուած Մոլտաւիա, հոն իբրեւ կալուածա-
 տէրեր անուանի եղած են:
 Լեհաստանի հայ գաղութի սկզբնաւորու-

363 յազահին: — 365 Պօղոս: — 382 յանդեայք: